

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2021թ հոկտեմբերի 4-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Բուրաստան համայնքում համայնքապետարանի վարչական շենքում /հասցեն՝ Արտաշատյան խճուղի, թիվ 2/2 տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում բաց, դասական եղանակով: Աճուրդի կազմակերպիչը Բուրաստան համայնքի ղեկավար Աշոտ Թարվերդյանն է:

Աճուրդի է դրվում կադաստրային 03-027-0036-0018 ծածկագրի տակ հաշվառված, Արարատի մարզ, Բուրաստան համայնք, Արտաշատյան խճուղի թիվ 2/12 հասցեում գտնվող 0.0094 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանված է նրա կադաստրային արժեքի 100%-ի չափով: Նախավճարը և նվազագույն հավելավճարի չափը /քայլի չափը/ մեկնարկային գնի 5%-ից ոչ պակաս, ավելացված ծառայության վճար:

Հողամասը սահմանափակումներ չունի, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել .

ա) հայտ, բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր, գ) անձնագիր կամ լիազորություն հաստատող փաստաթղթեր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը: Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կանոնակարգին կարող են ծանոթանալ Բուրաստանի համայնքապետարանում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին, առավոտյան ժամը 10:00-ից մինչև երեկոյան ժամը 17:00-ը:

Վերջին անենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթող:

Նույն օրը, ժամը 14:00-ին համայնքապետարանի վարչական շենքում տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության տրամադրման մրցույթ:

Վարձակալության մրցույթի է դրվում համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-027-0148-0002 կադաստրային ծածկագրի տակ հաշվառված 0.45246 հա հողամաս՝ գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող:

Վարձավճարի մեկնարկային գինը սահմանվել է 1 հա-ի համար՝ 7200 դրամ, վարձակալության ժամկետը՝ 25 տարի:

Նվազագույն քայլի չափը՝ 2000 դրամից ոչ պակաս:

Մրցույթում հաղթող է ճանաչվում վարձավճարի առավելագույն գին առաջարկող մասնակիցը:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից և վարձակալության մրցույթից 3 աշխատանքային օր առաջ:

Աճուրդի և վարձակալության մրցույթի պայմանների ու այլ մանրամասների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք

Հեռ. 093 10 31 31 , 077101869:

Բուրաստանի համայնքապետարան

